

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ
ՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ
(COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ

Առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ապահովելու պարտականությունն ամբողջ ծավալով կրում է ընկերությունը: Սպորտային օբյեկտներում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելման ուղղությամբ աշխատանքներն իրականացվում են ըստ երկրում համաճարակային իրավիճակի զարգացման փուլերի: Ներկա փուլում սպորտային օբյեկտներում գործում են աշխատանքի կազմակերպման ստորև ներկայացված կանոնները:

- 1) Ղեկավարության կողմից նշանակվում է կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման միջոցառումների պատասխանատու, ով հսկողության սահմանման նպատակով վարում է առնվազն ախտահանումների, աշխատողների և այցելուների առողջական վիճակի մասին գրանցումները (այլ գրանցումներն՝ ըստ նպատակահարմարության):
- 2) Աշխատանքի ժամանակացույցը պետք է կազմել այնպես, որ սպորտային օբյեկտում պատշաճ ժամանակ տրամադրվի մաքրության և ախտահանման կազմակերպմանը,
- 3) Սպորտային օբյեկտի ընդհանուր մուտքի, զուգարանի, լոդարանի, հանդերձարանի, խոհանոցային հատվածի (առկայության դեպքում), առանձին սրահների մուտքերի մոտ ապահովվում է ախտահանիչներով (ալկոհոլային հիմքով) տարողությունների, անձեռոցիկների և աղբարկղի տեղադրում, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման միջոցառումների վերաբերյալ տեղեկատվական պաստառի տեղադրում՝ համաձայն սույն որոշման հավելված N 11-ով սահմանված :
- 4) Յուրաքանչյուր օր ֆիքսված ժամերի տարածքի, մարզասարքերի մակերեսների, դռների բռնակների, սեղանների, ձեռքով հնարավոր հաճախակի հպման մակերեսների (մարզման պարագաների մակերեսներ, սարքավորումների վրայի բռնակներ), սանհանգույցների, լողախցիկների մակերեսների ախտահանում:
- 5) Ամեն օր մարզումների ավարտից հետո իրականացվում է սպորտային օբյեկտի ամբողջ տարածքի մանրակրկիտ մաքրում և ախտահանում: Ախտահանման նպատակով կիրառվում են քլորի հիմքով կամ 70-80 % սպիրտ պարունակող ախտահանիչ նյութեր՝ նյութին կից մեթոդական ուղեցույցին համապատասխան:
- 6) Մարզասրահներն օդափոխվում են յուրաքանչյուր 2-3 ժամը մեկ:
- 7) Յուրաքանչյուր մարզիկի մարզումից հետո շփման բոլոր շփման մակերեսները պետք է մշակել 60-80 %-ոց սպիրտային հիմքով ախտահանիչ նյութերով:
- 8) Ահրաժեշտ է ապահովել պայմաններ ձեռքերի կանոնավոր և մանրակրկիտ լվացման, չորացման համար՝ ներառյալ ջրի, օճառի, ալկոհոլային հիմքով ձեռքերի

ախտահանիչների, անհատական պաշտպանության միջոցների՝ եռաշերտ դիմակների, ձեռնոցների առկայությունը:

- 9) Մարզահագուստի պահպանման համար անրաժեշտ է տրամադրել հանդերձապահարաններ, որոնք յուրաքանչյուր օգտագործումից հետո անհրաժեշտ է մաքրել ախտահանիչ նյութերով: Այդուհանդերձ, ցանկալի է, որ մարզիկները ներկայանան մարզումների արդեն հագնված, ինչպես նաև մարզվելուց առաջ և հետո ցնցուղ ընդունեն տանը:
- 10) Մարզիկների ջրի շշերը և սրբիչները պետք է լինեն անհատական:
- 11) Անհրաժեշտ է հետևել, որ մարզումների ընթացքում սպորտային օբյեկտում մարզիկների կուտակումներ չլինեն: Հնարավորության դեպքում՝ ոչ խմբային սպորտաձևերի պարագայում, անհրաժեշտ է սահմանել մարզումների հերթափոխային գրաֆիկ:
- 12) Սպորտային օբյեկտում առանձնացվում են մարզումների գոտիներ՝ տարբեր մարզաձևերի և առանձին մարզիկների համար:
- 13) Մարզիկների և աշխատակիցների սնվելու համար առանձնացվում է տաք ջրով և օճառով լվացվելու և ձեռքերի ախտահանման հնարավորությամբ տարածք: Անհրաժեշտ է սահմանափակել այնպիսի սարքերի օգտագործումը, ինչպիսիք են՝ սուրճի մեքենաները, միկրոալիքային վառարանները և այլն, կամ ապահովել ախտահանիչ միջոցներ՝ օգտվելուց հետո դրանք ախտահանելու համար: Միաժամանակ՝ ընդմիջումների ժամանակացույցը անհրաժեշտ է կազմել այնպես, որ միաժամանակ քիչ թվով մարզիկներ օգտվեն ընդմիջումից՝ հավաքները կանխելու նպատակով:
- 14) Աշխատանքի և մարզումների ներկայանալիս անհրաժեշտ է կատարել աշխատակիցների/մարզիկների ջերմաչափում՝ բացառելով ախտանիշներ ունեցող անձանց մուտքը սպորտային օբյեկտ:
- 15) Չի թույլատրվում կողմնակի անձանց (դիտորդների) մուտքը սպորտային օբյեկտներ՝ բացառությամբ հրատապ անհրաժեշտության դեպքերի (օրինակ՝ մարզասարքերի վերանորոգման նպատակով):
- 16) Անհրաժեշտ է որքան հնարավոր է սահմանափակել մարզումների տևողությունը և սերտ շփումները: Նպատակահարմար է, որ մարզիկները որոշ հանձնարարություններ կատարեն տանը, իսկ դրանց հետ կապված քննարկումներն իրականացվեն հեռավար եղանակով:
- 17) Մարզումների ավարտից հետո արգելվում է մարզիկների խմբով հավաքվելը: